ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 12 >> նոյեմբերի 2013թվականի N 120 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ, ՄՀԵՐ ՄԿՐՏՉՅԱՆԻ ԱՆՎԱՆ, ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶԻ ԱՆՎԱՆ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐՈՒՄ ԵՎ ԱՍԼԱՄԱԶՅԱՆ ՔՈՒՅՐԵՐԻ ՊԱՏԿԵՐԱՍՐԱՀՈՒՄ ՀԱԿԱՀՐԴԵՀԱՅԻՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ելնելով Գյումրի համայնքի ենթակայությամբ գործող Ավետիք Իսահակյանի անվան, Մհեր Մկրտչյանի անվան, Հովհաննես Շիրազի անվան թանգարաններում և Ասլամազյան քույրերի պատկերասրահում հակահրդեհային անվտանգության պայմանների ապահովման անհրաժեշտությունից, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, <<Հրդեհային անվտանգության կանոնները հաստատելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի <<ա>> և <<բ>> ենթակետերով, ի կատարումն Հայաստանի Հանրապետության Արտակարգ իրավիճակների նախարարի 2012 թվականի հուլիսի 26-ի, <<Հրդեհային անվտանգության կանոնները հաստատելու մասին>> N 263-Ն հրամանի և հիմք ընդունելով Ռոտարի ակումբի նախագահ՝ Ալեքսան Արզումանյանի գրությունը (քաղաքապետարանում մուտքագրված 30.09.2013թ N-2297 թվագրությամբ)՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Տեղադրել հակահրդեհային և անվտանգության համակարգեր Գյումրու համայնքային ենթակայության Մհեր Մկրտչյանի անվան, Ավետիք Իսահակյանի անվան, Հովհաննես Շիրազի անվան թանգարաններում և Ասլամազյան քույրերի պատկերասրահում:
2. Ծրագիրը իրականացնելու և ավարտին հասցնելու համար Գյումրի համայնքի 2013 թվականի բյուջեի 8/2/7 հոդվածից տրամադրել 937,100 (ինը հարյուր երեսունյոթ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ՝ Լենա Ջիլավյանին կատարել գումարի հատկացումը:

Կողմ (20) **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

Ա.Ադամյան_____

Գ.Ադամյան_____

Ա.Բաղեյան _____

Ա.Բաղրամյան_____

Լ.Բաբսեղյան_____

Մ.Գաբոյան_____

Ա.Գրիգորյան _____

Վ.Եղիգարյան _____

Գ.Թաթարյան_____

Հ.Խաչատրյան _____

Հ.Կարապետյան_____

Տ.Հովհաննիսյան_____

Վ.Հունանյան_____

Ն.Մեսրոպյան_____

Ռ.Մխիթարյան_____

Է.Մկրտչյան _____

Վ.Շիրինյան _____

Ե. Պողոսյան _____

Մ.Սահակյան _____

Ա.Վարդանյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

2013թ. նոյեմբերի 12

ք.Գյումրի